ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Սևանա լճի առափնյա հատվածներում ջրածածկ պետական և համայնքային շենք-շինությունների ապամոնտաժման (քանդման) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի մայիսի 22-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրում 2020 թվականի հուլիսի 31-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Գնումը կատարվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով,
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագիրը լրացվել է վճարման ժամանակացույց հավելվածով,
Փոփոխության հիմնավորում՝	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կնքված պայմանագիր: Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«22» մայիսի 2020թ. N ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/04 պայմանագրի

ք.Երևան «31» «07» 2020թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Ա.Ավալյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Ալֆա Պրոգրես» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ք.Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և շրջակա միջավայրի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1203-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2020 թվականի մայիսի 22-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/04» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2020 թվականի մայիսի 22-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/04» ծածկագրով պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Ալֆա Պրոգրես» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Լվովյան 3/6
ՖՆ գործարկման գանձարան	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 90001018646	ՀՀ 1570051338040100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08618839
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ	«Ալֆա Պրոգրես» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Ավալյան	Ք.Գրիգորյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«31» «07» 2020թ. կնքված
համաձայնագիր №1
№ «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-20/04» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն
գլխավոր քարտուղարի ժ/պ
Մ.Ավագյան
Վստահագրությունն
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ալֆա Պրոգրես» ՍՊԸ-ի
տնօրեն
Գ.Գրիգորյան
Լիազորագրությունն
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(<< դրամ)

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/502	Սևանա լճի առափնյա հատվածներում ջրածածկ պետական և համայնքային սեփականության իրավունքով պատկանող շենք-շինությունների ապամոնտաժման (քանդման) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	**3 300 000**